


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱՀԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՖՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տրեկն. ողջ դի. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան Ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղումն նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

4. ՊՈԼՍՈՅ ԴԵՊԲԸ

Հինգշաբթի առաւօտ, — զուգահեռաբար
թեամբ մը որ կարծես ո՛չ մէկ հայու ուշա-
գրութենէն վրիպեցաւ այստեղ, — անցեալ
տարուան Պանք Օթոմանի ցոյցին ու անոր յա-
ջորդող կոտորածներուն տարեգարձի օրը, եւ-
րոպական Սուրհանդակը բերաւ Պոլսոյ վեր-
ջին դէպքերուն մանրամասնութիւնները որոնց
կը սպասէինք անձկութեամբ : Բարեբաղդա-
բար, ուժանակի պայթումն այս անգամ չէ
ունեցեր իր նախորդներուն սաստկութիւնը և
աղէտը չեղաւ այնքան մեծ ուժնով որ վախ-
ցուէր լուրին առաջին տպագրութեան տակ :
Ամենէն աւելի մտահոգութիւն ու տրտմու-
թիւն կը պատճառէ հայերու ձերբակալու-
թիւնները որոնք յա՛յ և յահեակ, անխնայ
կերպով վերսկսած են, կըսուի :

Եգիպտոս հասած հեռագիրները Պապը
Ալիի պատուհաններուն տակ եղած պայթու-
մը միայն յիշած էին, աւելցունելով թէ Ղալա-
թիոյ կողմն ալ թէեւ փորձ մը եղած՝ բայց
անյաջող անցած էր : Այդ փորձը կրկին ե-
ղած է, Պանք Օթոմանի և Բերայի ոստիկա-
նատան մօտերը :

Աւասիկ Եւրոպայի թերթերուն ուղղումած
հեռագրերը .

Կ. Պոլիս, 19 օգոստոս. — Երէկ, միջօրէին
յետոյ, ուսմբ մը նետուեցաւ Կալաթիա Սէ-
րայի մօտ, բայց չի պայթեցաւ. նոյն միջոցին,
Պանք Օթոմանի մօտ ձերբակալուեցան երկու
կասկածելի մարդեր, եւրոպական տարազ
հագած, որոնց վրայէն տիւնամիթ գտնուե-
ցաւ : Միւսին առնել, պայթում մը տեղի ու-
նեցաւ ի Պապը Ալի, եպարքոսական պաշտօ-
նատունէն դէպի պետական խորհրդոյ պաշ-
տօնատունը տանող յարկին տակ . պատու-
հանները խորտակուեցան և բաւական քիչ
պատճառեցին : Վերադարձնելու ալ կան : Կըս-
ուի թէ այս փորձին հեղինակներն հայ են :

Այս դէպքերուն պատճառաւ, չփութու-
թիւն ծագեցաւ քաղաքին մէջ : Խանութները
փակուեցան, բայց քիչ յետոյ բացուեցան :
Իրիկուան ժամ ճին, հանդարտութիւնը կը
տիրէր ամէն կողմ :

(Բոսկրէի արտատպած մէկ տեղեկու-
թեան նայելով, այս փորձերուն իբրեւ հեղի-
նակ ձերբակալուած երեք հայերէն մէկը նոյն-
ժամայն մեռուցեր են) :

Կ. Պոլիս, 19 օգոստոս. — Լրագրաց մէջ
հրատարակուած պաշտօնական Յայտարարու-
թիւն մը հայերուն կը վերագրէ երեկուան
դէպքը : Զրհանկրաց վաշտ մը կը սպասէ Բ.
Դրան մօտ, պայթումը պատահած տեղը : Պոլ-
սոյ վաճառատուններուն մէկ մասը գոյ են տա-
կալին : Բազմաթիւ պահակ զօրքեր կը շրջին
Գիշերուան համար՝ զգուշութեան արտասովոր
միջոցներ ձեռք առնուած են : Գաղաքը իր
սովորական երեւոյթն ունի : Զերբակալուած
հայերուն հարցաքննութիւնը կը շարունակուի :
Արդիւնքը ծածուկ կը պահուի :

(Բարիքի օմանեան գեապանատան ուղ-
ղումը պաշտօնական հեռագիր մը մոյշեռանդ
(fanatique) տիտղոսը կուտայ իբրեւ ցուցա-
բար բռնուած հայերուն և ուրիշ տեղ մըն ալ
անիշխանական (anarchiste) կանուանէ զա-
նոնք, երկու բաւեր որոնց առաջինը մինչեւ
հիմայ կը գործածուէր տաճիկներուն համար,
ու երկրորդը Եւրոպայի ընկերակալականներուն
մենաշնորհն էր : Ուրիշ հեռագրի մը նայելով,
ձերբակալուած հայերէն երկուքը դէպքէն եր-
կու օր առաջ Ռուսիայէն եկած էին) :

Բարիքի Պանք Օթոմանը հետեւեալ հե-
ռագիրն ստացած է Կ. Պոլսէն .

«Այսօր հայ մը մտաւ Պանքան, ձեռքը
ունենալով ծրար մը որ կասկածելի կերեւար-
իսկոյն ձերբակալուեցաւ պահապանին կողմէ :
Ծրարին մէջ տիւնամիթ կար : Դրպաններէն
գտնուեցան միանգամայն հարիւրի չափ փամ-
փուշտ և ընձովէր մը» :

Վիէնայի Բօլիքիչէ Բօրեսքոնսէննի
խօսքին նայելով, Բ. Դրան մօտ ուսմբ արձա-
կող մարդը թուրք ոստիկանի հագուստ հա-
գած էր, իսկ Ղալաթիա գտնուած միւս ուսմ-
բը ուսերէն թերթի մը մէջ փաթթուած է
եղեր :

Պէրլինի Թակեպլաք լրագրին թղթակիցը
կըսէ թէ ուսմբերու արձակման գործը շատ
խորհրդաւոր երեւոյթ մը ունի : Ոչ ոք հաւատ
կրնձայէ պաշտօնական յայտարարութեան ու-
րուն համեմատ՝ այս փորձը հայերուն կողմէ
կատարուած է :

Գեապանները իմացուցեր են Բ. Դրան, որ
եթէ շարդ պատահի, եւրոպական նաւատոր-
միջները Վոսիսը պիտի մտնեն այս անգամ :
Սուլթանը իր մասնաւոր քարտուղարը Պ. Գան-
պօնի մօտ զրկեր է, խորհուրդ հարցունելու
համար : Ֆրանսական գեապանը յանձնարարեր
է եղեր ամենախիստ միջոցներ ձեռք առնել
որեւէ գրգռման կամ ծայրայեղութեան առաջ-
քը առնելու համար, որոնք ծանր դժուարու-
թիւններ կրնան ստեղծել :

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Պոլսեցի հայ գաղթական մը, Խաչիկ
Ղազարուեան, Մահմէտականութիւնը պիտի
ընդունի վաղը :

Այս հաւաստիոյութեան դէպքը եւրո-
պական հաւաստիւնաբանութիւնը խանգարելու
եւ կամ սակարաններու մէջ ելելէ մը ա-
ռայ թերելու հանգամանք չունի : Հայ մը
պակաս կամ քանակ մը աւելի ըրաւորն հա-
մար չէ որ աշխարհի պիտի դարձի իր ա-
ռանցքին վրայ դառնալէ :

Արդիւնքը կարեւորութիւն ունենալէ
գոյրկ է, քայց այդ կրօնափոխութեան պատ-
ճառները ցաւալի ըրալէ աւելի զուարճալի
ըրաւորն համար է որ մեր Այժմութիւնը
կը մոխրեմբ այսօր Խաչիկ Ղազարուեանի,
որ քանակորս ժամէն այդ եւս այդ անունը
կրելու իրաւունք չպիտի ունենայ :

Դիւրաբեկ հաւաստի, քայց հոռիկու
կազմուածքով քանակորս տարեկան երիտա-
ւարդ մըն է Լուսաւորչի մարտիկ զաւակը եւ
Մահմմէտի այդ ապագայ որդեգիրը :

— Երեսուն ոսկի տոմէր ինձի, ըսած է
Դաղթականաց յանձնաժողովին, ապա քէ ոչ
քանակ պիտի ըրալ :

Այդ ապառնալի ապաստած արդիւնք
չէ ունեցած քաղաքադաւար, եւ մեր պա-
րունք, ի՛նչ կըսեմ, մեր հօգեհին, առած քա-
լած է ուղղակի իր նպատակին :

Իրաւ է որ, անեւ գաղթականներու պէս,
մեր հերոսին վիճակը վարդազոյն ըրալէ
հեռի էր . հաց եւ ձիւրապտոյ կը տրուէր
իրեն, ինչ որ քաւական է չի մեռնելու հա-
մար :

Գաղթորս տարու երիտաւար մը, որ
յաղթանդամ է, չի մոռնալ, յոսանաւոր
իրաւունք չունի :

Vouloir c'est pouvoir. ասիկայ առած մըն է
որ հայերէնի քաղաքականութեան մը չի
կորսնցներ իր մէջ պարունակած ճշմարտ-
րեւեմ :

«Ուղեղը՝ կարենալ է» եւ մեմֆ սա հա-
մոզումը ունի որ, դեռ քանի մը օրուան
համար Խաչիկ եղող անձը, երբ աշխատ-
ութեան համար այն սերը ունենաւ ինչ որ
ունի կրօնափոխութեան համար, Լուսաւորչի
կրօնը անսանելի չպիտի գտնուէր. ընդհակա-
ռակը :

Ծոյոյութեան տխրաւ մըն է որ կանկեթի վեր մեջեմ եւ այս կրօնատիտութիւնը զմեզ տարեցնելու տեղ ուրախութիւն կը պատճառէ մեզի, երբ մասնաւոր կը մտածենք թէ Փոքր Ասիոյ խորեւրու հարիւր հազարաւոր հայեր՝ աւուր լղերեւուն վրայ, կրակիւն, բոցիւն դիմաց՝ անխախտ մնացած են իրենց կրօնիւն եւ հաւատքիւն մէջ եւ փոխանակ աշխարհ ապրելու հայ մեռնիկը նախընտրած են:

Ասակի համար հաւատքիւն ուրացողները հայ կոյտելոյ արժանի չեն:

ԲԱՆՏԱՅԻՆ ՅԵՇԱՏԱԿՆԵՐ

Յրանաւան Ռեզիւ տէ Ռեզիւ հանդէսը յօդուած մը հրատարակած է որ մասնաւորապէս կը խօսի՝ անցեալ տարուան Պոլսոյ կոստանդին մէջ բուրժուայի սոցիալական կասարած պոգալի դերին վրայ: Այդ յօդուածէն, որ տարուաւ շանկանութիւն մը ունի մեզ հայերու համար, կը բաղեմք բանի մը մասեր:

Ժողովուրդի ամենէն ստոր խաւերէն ծագում առած մէկն է Նազըմ փաշա (ոստիկանութեան նախորդ նախարարը). քրդական ու սուրիական արիւնի խառնուրդ մը՝ խորամանկ դատաւարութեան խորշի դէմք մը տուած են անոր: Նազըմ ինքն էր որ անցեալ տարի կազմակերպեց ի Կ. Պոլիս կոստանդին այն երեք օրերը որոնց միջոցին իր պաշտօնատան մէջ դիզուեցան 200,000 ոսկիի աւար, վաճառատուններու կողմէն և դիակներու մերկացումէն գոյացած: Նազըմ՝ ոստիկանութեան նախարարութեան ապահովեց հասոյթներ որոնք կայսրութեան ամենէն կանոնաւոր ու առատ հասոյթներն են: Ձերբակալուած իւրաքանչիւր անձ, բանտ մտած ատենը, վրայէն կանոնէին քսակը, ժամացոյցը ու մատանին: Յետոյ, բանտարկութեան ժամանակամիջոցին, իրեններուն կողմէ բերուած դրամով պէտք է վճարէր ճաշելու համար, գաւաթ մը ջուր խմելու համար, մինչեւ իսկ ճեմիչ երթալու համար, նամակ մը ստանալու կամ խրկելու, իր մայրը կամ կինը տեսնելու համար: Վերջապէս իրմէ կը կորզեն, իրեն վերկանք, 20էն 500 ոսկի, և երբ կիմանան որ հարստութիւնը ա՛լ սպառած է, ուրիշ հայ մը կամ յոյն մը կը բերեն անոր տեղը: Այդ տարաբաղդներէ ոմանց փրկանքը ճարելու համար, մինչեւ իսկ տեսած ենք թուրքեր որոնք մէջերնին հանգանակութիւն կատարած էին: Երեք տարիէ ի վեր է որ, սիսթեմական կերպով, հազարաւոր էսնաւ հայ ընտանիքներ, լրտեսներու և ոստիկաններու բանակի մը կողմէ հետզհետէ կը կողոպտուին իրենց ունեցածէն, բազմաթիւ սերունդներու ճակտին քրտինքովը շահուած հարստութենէն:

* * *

Նազըմը մասնաւորապէս վարպետ նկատուած էր «գաղտնիք խլելու» ճիւղին մէջ: Պիտի տեսնուի թէ մասնաւոր հակում մը ունէր այն կարգի տանջանքներուն համար որոնք հետք չեն թողուր մարմնին վրայ: Հետեւեալը մեզ պատմուած է Պ. Հովսեփեանի կողմէ, շնորհով ընտանիքի մը զաւակ, որ օտար երկիր կը գտնուի հիմակ — «Այնքան նեղ դարակի մը մէջ փակեցին զիս որ անկարելի էր ինձ՝ ո՛չ նստիլ ո՛չ ալ կեցել: Բնական պէտ-

քերուս համար իսկ դուռը չէին բանար: Գըլխուս վերեւ գտնուած պղտիկ լուսանքէ մը հայ մը նետեցին: Երեսունընեց ժամէն, սկըտայ զաւանցել: Պաղ քրտինք մը մարմնիս պատեց: քունքերս կը բարախէին: Ու ժգնուած պէս պատերուն կը զարնուէի, պոռայով «Բա՛ցէ՛ք, հայ քովի՛մէն պետք ես եմ»: Նազըմի առջեւ տարին զիս ուր երկար պատմութիւն մը ըրի, անուններ տալով, թուականներ յիշելով, հազարումէկարկածներու խառնուրդով յետոյ, զգացի որ մտածելու կարողութիւնս կը կորնցունեմ: Փանի մը օր ետք, խեղք գըլխուս եկաւ յիմարանոցի մը մէջ: Բարեկամներ դիւրութիւն ընծայեցին ինձի յունական առաքատանս մը երթալու որ Տարսանէյէն դուրս հանեց զիս:»

Աւստիկ ուրիշ պատմութիւն մը զոր ըրաւ մեզ Ա. պէյ, Ժէօն-Թիւրք մը. — «Կեդրոնական բանտի այն սրահն ուր գրին զիս, մեծ վանդակ մը ունէր ուսկից ներս կը թափանցէին դուրսի կոյուղիներուն հոսը ու խոնաւութիւնը: Դիւրեւ մնացինք դարչելի մթութեան մը մէջ ուր բանտարկեալները կը մըղէին ամիսներէ ի վեր, առանց հազուադէպ խելու: Այդ սրահին մէկ ծայրը գետնափոր մը կար ուր, դադաղի չափ ծաւալ ունեցող տեղի մը մէջ, պառկեցուցած էին Նիկոմիդիոյ շրջականներէն ազարակատէր մը, հայ մը որ ամբաստանուած էր իրեն մասնակից գաւազրութեան: Ամեն դիշեր, ժանտարմաներ կուգային արթնցունել զայն՝ իրենց հրացանին բունովը զարնելով երկաթ փականքին, և հարցաքննութեան կը տանէին: Անոր ձեռքին անցուած շղթայներէն կը քաշուէին, ու չի պիտի մոռնամ բնաւ իր գլխին օրօրումը ու իր նայուածքը որ անկենդան էր այլ եւս: Ինձմէ շատ ետքը բանտ մնաց ու արձակուեցաւ իր ձերբակալման շարժառիթը սա էր. Նիկոմիդիոյ ոստիկան-ղինուորներու սպան գրաւ բրուած էր թէ «կա՛մ իր հաւնոցը ինձի պիտի տայ և կամ բանտի մը մէջ պիտի թաղել տամ զինքը»:»

* * *

Եթէ Միւնիքի դպրոցին հետեւողները Սարսէյի քրօնիկները կը կարգան բարիքեան նրբամտութեան երեւոյթ մը ունենալու համար, Նազըմի սերունդին մարդերն ալ մտաւոր մշտկութեան արտաքին կոչու փայլէ մը զուրկ չեն: Այսպէս, օրին մէկը Նազըմ իր ներկայութեան կանչելով Հայրենիք լրագրին տնօրէնը, Պ. Շահնազար, ըսաւ անոր. «Անգամ մը յեղափոխութիւն մը պիտի ծագէր Բարիկի մէջ: Ձինուորական զօրութիւնը անկարող եղաւ զայն զսպելու: Վիզիթը Հիւկօ քանի մը ոտանաւորներ գրեց, յեղափոխութիւնը դադարեցաւ իմ ամբողջ ոստիկանութիւնս անկարող է հայերուն վրայ ունենալ ձեր լրագրին աղագրութիւնը: Ձեզի անկէ է կասեցունել այս ազգային շարժումը: Աւստիկ յօդուած մը զոր պէտք է տպէք:» Պ. Շահնազար մերժեց: «Մերժեցէք, եթէ կրնաք, գողեց Նազըմ. ոստիկաններով պաշարել կուտամ ձեր խմբագրատունը, իմ կողմէն խմբագիրներ կը տեղաւորեմ՝ հոն և ուղած յօդուածներս գրել կուտամ»: Այս սպառնալիք չի գործադրուեցաւ: Բայց, շատ չանցած, Պ. Շահնազար ձերբակալուեցաւ,

դատուեցաւ ու մահուան դատապարտուեցաւ իրեն յեղափոխական:

Ռեզիւ տէ Ռեզիւ տնօրէնը մտածեց Ալֆօնս Տօտէի վեհանձն զգացումներուն կուտում ընել դժբաղդ Շահնազարը փրկելու համար: Փրանսացի մեծանուն գրագէտը, որուն անունը այսուհետեւ սիրալիր յարգանքով կարտասանուի հայերուն կողմէ, իր բոլոր ազգեցյութիւնն ու պերճախօսութիւնը գործածեց այս պարագային մէջ Պ. Հանօթիոյ մօտ: Արտաքին գործոց նախարարը բաւականացաւ երկու բառ հեռագրել պալատի իր բարեկամներուն, ու քանի մը ժամ ետք Տօտէ կիմանար թէ հայ հրապարակագրին կեանքը փրկուած է:

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

Բ.

ԻՌՍՈՒԻՏԱՐՅՈՒ ՆԻՆԸ

Գիշերը հաւերուն հետ կը պառկի և առտուն տըրտընեւորուն հետ կարթննայ. հակառակը վտանգի առկա պիտի դնէր իր պարկեշտութիւնը:

Ծննդեամբ թխաղմ կըլլայ, բայց արհեստին շնորհիւ շուշանաթոյր է իւսկիւտարցի կինը:

Աղջկի եղած ոտները խրեալ աշխարհաբար կը խօսի, կարգուեւուն պէս կը մտնայ:

Ս. Խաչ եկեղեցին կերթայ կանոնաւորապէս, տեսնելու համար թէ Գառը-Գիւղէն եկողները ինչ հողած են:

Եթէ տուները պատուհաններ չունենային, իւսկիւտարցի կինը spleenէ պիտի մեռնէր:

Լոնտոն, Բարիկ, Պէրլին մէյժիկ observatoire ունին, իւսկիւտարի ամեն մէկ տունը մէյժիկ դիտարաններ են:

Իրենց համար իւսկիւտար գիւղերուն ամենէն լուսաւորեալը և ամենէն aristocratiqueն է որովհետեւ... Տօրթ. Էսմէրեան հոն կը բնակի:

Շատ կոկիկ են իրենց բարոյականին մէջ, բայց շատ թափափած իրենց արգելադրին մէջ: Իւսկիւտարցի կինը իր էրկանը վրայ խօսելով, «Գրիգորի աղան» կըսէ, ինչպէս Գառըգիւղցի կըսէ «Ամուսնա», Բերային՝ «Գրիգոր», Թօփիսափուցին՝ «Յօճու խնեւուն հարը», Եֆէնիկիցին՝ «Էրիկ» և Օրթագիւղցին՝ «Իմիւր»:

Եթէ իւսկիւտարի կիներուն գլխարկները սեղանի մը վրայ շարեւ, ուղիղ կունենաւ գլխարկի retrospective ցուցահանգէս մը:

Ձեռնոցին վրայէն մատնի կը հագնի և փէշին տակէն ֆօլաք միս:

Շապիկները ձեռքով շինուած մատի մը լայնութեամբ քրօշով կ'սկսին և շապիկին ընկերները մատ մը քրօշով կը վերջանան:

Բաղինք կ'երթայ... զօրանելու համար, այն ալ տարին մէկ երկու անգամ:

Քալուած քնուն մէջ յուսահատեցուցիչ չգիտեմ ինչ մը կայ որ բեզ զղջալ կուտայ հոյ ծնած ըլլալով:

Իւսկիւտար տուն-փեսայ երթալը անձնասպանութեան մէկ տեսակն է:

Նշանուոր կերպով սկսած կը խաղան, շնորհքով տան կրնեն, բայց բիանօ չալել մի տար, անպատճառ La Prière d'une vierge ու կսկսին և «Ալտը տու պիւր եղբորդ»ով կը վերջացնեն:

Իւսկիւտարցի կինը ուխտած է էրկենէն ետքը մեռնիլ, միմիայն ամուսնոյն յուղարկաւորութեան քանի հոգի եկած ըլլալը հարկելու գոհացումը ունենալու համար:

ՌԱՏԱՄԵԼՍ

Գ Ա Լ Ս Տ Ե Ա Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն

Ա Զ Դ

Գալտեան երկեսը վարժարանի արձակուրդը կուտարին յառաջիկայ չորեքշաբթի, Սեպտեմբեր 1ին, իսկ դասախօսութիւնը կը սկսին յաջորդ երկուշաբթի օրը, Սեպտեմբեր 6:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Վաղը, Վերափոխում Ս. Աստուածածնի, Գահիրէի եկեղեցւոյն տօնախմբութիւնն ըլլալով, առաջնորդական տեղապահ Տ. Յակոբ Ծ. վարդապետ Աշոտ պատարագ պիտի մատուցանէ :

Յաւարտ պատարագին, յատուկ պաշտօն պիտի կատարուի ի հանգիստ հոգւոյ Հայաստանի և Կ. Պոլսոյ կաթողիկոսներու ողբացեալ զոհերուն :

Աւասիկ Աղեքսանդրիոյ գաղթականաց Գանձնաժողովին հաշուեկշիռը որ մեղ զրկուած է ի հրատարակութիւն :

1886 Սեպտեմբեր ամսէն մինչեւ 1897 օգոստոսի վերջը Գանձնաժողովը 267,250.75 եգիպտական ուղ զահեկանի մուտք մը ունեցած է, ամբողջովին նուիրատուութիւններէ գոյացած, (նուիրատուներու առաջնորդը յաջորդաբար պիտի հրատարակենք)։ Իսկ ելքին կողմը 266,941.25 զահեկանի դուրս մը հետեւեալ ամսական բաժանումներով և մանրամասնութիւններով։

	Եգ. ուղ զահ.
Սեպտեմբեր	5094
Հոկտեմբեր	18053.50
Նոյեմբեր	18654.75
Դեկտեմբեր	33671.25
Յունվար	25230
Փետրվար	19392
Մարտ	30782.25
Ապրիլ	31520.75
Մայիս	37060.50
Յունիս	22600.50
Յուլիս	24882

Տարեկան ամսական չորսնիս մէջ այս 266941.50 ուղ չորսի դուրսը գաղթականներու անմիջական պէտքերուն համար գործածուած է ապաւն :

	Եգ. ուղ զահ.
Ընդհանուր ուտեստի	147520
Հանապարհածախս	33032
Դրամական նպաստներ	14736.50
Փոխադրութեան ծախս	3914.75
Բնակութեան վարձք	19426.50
Անկողնոյ պիտոյք և հանդերձեղնք	12985.25
Գրասենեակի պիտոյք և զանազանք	3734
Դեղորայք	8299.50
Բանուորչէք և պաշտօնէութիւն	23293

Հետեւորար Գանձնաժողովը միմիայն 309.25 զրդ. պատրաստի դրամ ունի իր սնտուկին մէջ և որովհետեւ դեռ 80ի մօտ գաղթականներ կան իրենց ինամոյը կարօտ, Աղեքսանդրիոյ Թաղական խորհուրդը քաղաքին նշանաւոր անձնաւորութիւններէ կազմեալ միջազգային Գանձնաժողով մը կազմած է որ ի նպատակ այդ մնացեալ գաղթականներուն գաղտային հանգէս մը կազմակերպելու կաշխատի :

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Փրանսական Հանրապետութեան նախագահը չորս օր Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ հիւրընկալուելէ, պաշտօնական արտասովոր պատիւներ ու ժողովրդական խանդավառ ընդունելութիւն մը գտնելէ ետք, հինգշաբթի օրը մեկնեցաւ : Չարը, Չարուհին և Մեծ-դուքսերը Պ. Յելլերս Ժօռի ընկերացան մինչև Գրօնլէմտ և Բօթլո մարտանաւին մէջ ճանչցին : Առջի օրը, ի Գրանդօնէլօ կատարուած զօրահանգէսի միջոցին, Նիքօլա Բ. Ժամ մը տեսակցեցաւ Պ. Հանթօրի և Պ. Մուրալիէֆի հետ :

— Բեդրսպուրկէն կը հեռագրեն թէ խումբ

մը բոլնիայի ուսանողներ պըսորուեր են, կարգ մը թուղթեր երեւան ելլելուն հետեւանօք որոնք կարծեցունել կուտային թէ դաւադրութիւն մը կը պատրաստուի Չարին դէմ :

Դարձեալ Ռուսիոյ մայրաքաղաքէն անգլիական թերթերու հաղորդուած լուրերուն նայելով, զինուորական յատկաձեւերու գործութեան գործ մը երեւան ելլելէ : Յանցաւորները, պետական խորհրդական Բարունօֆ, աղջիկը, Թուրչանինօֆ անուն տեղակալ-գընդապետ մը և թուրք նախկին գնդապետ Ապուրրահման Սիւլէյման, ամենքն ալ բանտն են և պիտի դատուին : Ասոնք կը գործեն եղբր ի հաշիւ աւստրիական կառավարութեան : Թուրչանինօֆ և Ապուրրահման յաջորդէն ձեռք ձգել յատկաձեւեր զորս Բարունօֆի և անոր աղջկան ձեռքով վաճառու են ի Վիէննա՝ 2000 ռուպլի : Բայց իրենց խոստացուել է եղբր 25,000 ռուպլի, եթէ յաջողին ստանալ ռուս բանակին վերաբերող աւելի կարեւոր յատկաձեւեր որոնք այս միջոցիս կը տպագրուին ի Բեդրսպուրկ :

— Կրէտէի զանազան կողմերը արինա հեղ կռիւներ կը շարունակուին միշտ : Հանեալն կը հեռագրեն թէ վաթսուն թուրքեր զինուորական շղթան կարել անցնելով, յուսնալի գիւղի մը վրայ յարձակուել են ի Ռէթիմ : Երկու կողմէ մեռածներ ու վիրաւորուածներ կան : Այս դէպքեր արգելք չեն եղած սակայն որ ծովակալները՝ Աւստրիոյ կայսեր տարեգարծին առթիւ՝ ազատ չարձակեն այն երկու թուրքերը զորս բանտարկած էին Սիւլիշիա մարտանաւին մէջ, եւրոպացի զինուորներուն անարգանք և ընդդիմութիւն ըրած ըլլալուն համար, և զորս կը պահանջէր ձէվատ փաշա :

— Մուրատ պէյ որուն Կ. Պոլիս վերագարծը ծանուցինք արդէն, նախագահ անուանուել է Գանձնաժողովի մը որ պաշտօն ունի պետական և հանրային պաշտօնատուններուն դէմ ուղղուած գանդատները քննելու :

ՏԵՂԱԿԱՆ

Նախարարաց խորհուրդը երկուշաբթի ի նիստ պիտի գումարուի՝ Բարձր. Խորհրդին նախագահութեամբ :

— Վատի Հալիֆան Ապու Համատի միացնող ռազմական երկաթուղիին շինութիւնն աւարտած է 142 միլոն տեղ :

— Կըսուի թէ երէկ առաւօտ մենամարտ մը տեղի ունեցել է քաղաքիս մէջ, հին Գահիրէի կողմը : Մենամարտիկներէն մէկը ծանրապէս վիրաւորուել է :

— Անգլիական գրաւիչ բանակին տասնապետներէն մէկը նախընթաց օր անձնապահ եղաւ Ապպասիէի զօրանոցին մէջ, ընկելով վերի հարուած մը պարպելով բերնին :

— Եգիպտոսի օրէնսդրական խորհուրդը քննութեան առած է և պիտի վաւերացնէ ծրագիր մը որուն համեմատ մեծապէս կը զեղչուին դատական ծախքերը, ինչ որ մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ հանրութեան : Այսպէս, դատի առարկայ եղող առաջին 50 ոսկիին համար՝ 100ին 10ի տեղ 8 պիտի վճարուի, երկրորդին համար 100ին 8ի տեղ՝ 6 և այսպէս համեմատաբար : Ուրիշ բարեփոխումներ ալ կը խորհուին :

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԵՐՈՒՊԱԿԱՆ ՍՈՒՐՉԱՆԴԱԿԻ

Նորագոյն լուրերու նայելով, Պապը Ալիի պատահաններուն տակ ուժանակ պայթեցունող անձը կեստարացի հայ մըն է եղեր, կարապետ անուն : Պայթումէն ձեռքը վիրաւորուել է :

— Եւրոպական թերթերը օգոստոս 20 թուականով հեռագիր մը կը հրատարակեն Կ. Պոլսէն, ծանուցանող թէ Դուռը չըջարեւական մը ուղղել է դաւառաց բոլոր կուսակալներուն և զինուորական բոլոր պաշտօնատարներուն, պատուիրելով որ արգիլեն որեւէ յարձակում չընել հայերուն դէմ, ինչ որ կրնայ պատահիլ վերջին դէպքերուն հետեւանօք : Շրջաբերականը պատմականաբար կը բռնէ պաշտօնատարները, եթէ չփոթութիւններ ծագին : (Երանի՛ թէ ճիշդ ըլլար այս չըջարեւականին լուրը) :

— Կ. Պոլսէն օգոստոս 15 թուականով կը հեռագրեն Սթանբուլին. «Վանէն և Մուշէն առնուած տեղեկութիւններ ցոյց կուտան թէ տեղական իշխանութիւնները ամեն ջանք կընեն որպէսզի քրիստոնեայ և իսլամ տարրերուն մէջ ընդհարում մը տեղի չունենայ և այս նպատակով՝ հայ և քրիստոնեականներուն միջեւ հաշտութեան մը կարգադրութիւններն ըրին. բայց և այնպէս, ահապարտելով նոր զինուոր կը խրկուի հոն և շատ մեծ փոխեր կան : Թուրք կառավարութիւնը զայրացած է Պարսկաստանի կողմէ հայ յեղափոխականներու տուած քաջալերութեան դէմ և խիստ ծանուցադիր մը զրկուեցաւ Պոլսոյ պարսկական դեսպանին » :

ՐԱՖՖԻԻ ԳՈՐԾԵՐԵՆ

Այրի Տիկին Աննա Բաֆֆի մեղ հաղորդած է իւր ամուսնոյն անտիպ գործերէն հատուած մը, զոր հաճութեամբ կը հրատարակենք Մեծանուն վիպասանին Սալթիս գրուածքէն գլուխ մըն է :

ԹԱՏՐՈՆ

... Վարագոյրը բարձրանում է, թատրոնական ընմը ձեւացնում է մի սքանչելի տեսարան, որ պատկերացնում էր ծերունի Հայաստանը իւր տիպուր և որոտում կերպարանքներով, Հեռուն, հսկայի նման կանգնած է Արարատ սարը. նորա չորեք կողմում տեսանելի են քանդուած քաղաքների և գիւղօրայից աւերակներ, որոնց վերայ տիրում է յալոտենական խաւարի թագաւորութիւնը : Շինութեան Ոգին միայնակ թռչում է այն մահահրաւիր տարածութեան վրայ : Երկար թռչելուց յետոյ նա նստում է աւեր Հայաստանի փլատակների վերայ. նա սկսում է մտածել... նա մտածում է նորա միւս անգամ շինութեան մասին :

Յատակագիծը ծրագրվում է, նիւթը պատրաստվում է. Ոգին կամենում է ձգել լինութեան հիւրը : Երեւան են լինում չորս մանկահասակ հերոսներ : Նոյանից ամեն միւր բերում է մի ահագին քար. դնում է լինելուց շինութեան յատակագիծի մօտ, ասելով. «Ահա՛ շինութեան անկիւնաքարը. դորա վերայ պիտի դրուի հիւրը» :

Այդ քարերը ունեն զանազան գոյն ու զանազան ձեւեր : Նոյանից մինի վերայ դրուած էր այս խօսքերը. «Աւետարան կամ կրօնական կեանք» : Միւսի վերայ. — «Դպրոցներ կամ խնայական կեանք» : Երրորդի վերայ. — «Հող կամ նիւթական կեանք» : Չորրորդի վերայ. — «Թագ եւ գաւազան կամ փառափալան կեանք» :

Ոգին կամենում է ձգել հիւրը, Հերոսներից առաջին միւր իւր քարը առաջ է մղում, պահանջելով թէ նա պիտի լինի գլխաւոր անկիւնաքարը : Բարձրանում է վիճ և աղմուկ : Նորա սկսում են միմիանց դէմ հակաճառել շինութեան գործը միւր է անշարժ :

Մինչ դրա այդ խռովութեան մէջ էին, երեւան են լինում հերոսների մի նոր խումբ, սեւ հագուստներով, երկայն մօրուքներով և կատաղած ու փրփրած բերաններով : Նոյա գլորելով բերում են մի ահագին անտաշ քար, յալոտենական հիւրընկալից սեւացած և բորբոսած, որի անհարթ մակերեսային վերայ հազիւ կարգացում էր բառա՝ «Խաւար կամ մեռելային կեանք» :

«Կորէ՛ք, լակոտներ, գուռացին նորա դէպ առաջին չորս մանկահասակ հերոսները, յալոտենից այդ տեւրակների հիւրը դրուած է եղել այս սրբազան քարի վերայ. դարձեալ սորա վերայ պիտի հաստատուի նորոգ շինութիւնը» :

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱԼԷԿՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱԶՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Բ Է

Գնում և վաճառում արժեթուղթերու.—
Կանխավճար արժեթուղթերու վրայ.— Կատան-
ման յաճախողներու հաշիւն համար գան-
ձումներ ընել եղիպտոսի և արտասահմանի
գլխաւոր քաղաքներու մէջ.— Պայմանաժամա-
ւոր վաճառում ամեն տեսակ պարզեւաւոր
արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով։

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դի-
մել Պուլքա փողոց եգիպտական հաւաքարտան դէմ
Բէսսաւոզովու դրամատունը։

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօղպէքիյէ, Պիւպիւեանի օթէլին քովըն-
տի կամարակապ փողոցը բացած խանութին
մէջ ամենէն դժուարահաճները գոհացնելու
եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սո-
վորական գիներով։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԳԻՐՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Սմիւր		Կէս ուղ.		Սմիւր		Էքսրէս		Սմիւր		Էքսրէս		Սմիւր	
		1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 —	—	8 15	—	9 30	—	3 30	—	4 45	—	7 15	—	11 —	—
Պէնհա	»	8 —	—	7 49	—	9 32	—	10 15	—	4 47	—	5 29	—	8 32	—	12 35	—
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	—	10 30	—	10 55	—	5 45	—	6 7	—	9 30	—	1 44	—
	մեկ.	11 48	—	8 34	—	11 15	—	11 —	—	6 26	—	6 11	—	—	—	1 54	—
Տամանհոր	»	3 10	—	7 34	—	9 41	—	12 49	—	11 58	—	7 59	—	7 7	—	3 51	—
Աղէքսանդրիա	ժամ.	6 25	—	9 15	—	10 45	—	2 30	—	1 —	—	9 40	—	8 7	—	5 50	—

ԱՂԵՔՍԱՆԳԻՐՈՅԷ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Սմիւր		Կէս ուղ.		Սմիւր		Էքսրէս		Խառն		Սմիւր		Էքսրէս		Սմիւր	
		1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.
Աղէքսանդրիա	մեկ.	—	—	7 —	—	7 15	—	9 —	—	9 20	—	2 30	—	4 15	—	6 15	—
Տամանհոր	»	—	—	8 6	—	8 58	—	10 2	—	12 14	—	4 13	—	5 15	—	8 6	—
Թանթա	ժամ.	—	—	9 12	—	10 28	—	11 —	—	2 39	—	5 43	—	6 10	—	9 40	—
	մեկ.	6 15	—	9 16	—	11 20	—	11 5	—	2 49	—	6 30	—	6 14	—	—	—
Պէնհա	մեկ.	7 18	—	9 59	—	12 23	—	11 46	—	4 43	—	7 33	—	6 52	—	—	—
Գահիրէ	ժամ.	8 30	—	10 45	—	1 35	—	12 30	—	6 25	—	8 45	—	7 35	—	—	—

ԳԱՀԻՐԷ-ՍԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ		ԵՐԵԿՈՅ		ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ		ԵՐԵԿՈՅ	
Գահիրէ	մեկ.	11 40	—	7 —	—	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—	—	—
Պէնհա	ժամ.	12 28	—	7 48	—	» կայարան	»	—	—	3 30	—
	մեկ.	12 33	—	7 53	—	Խամպիւ	»	1 20	—	7 5	—
Ջակաղիկ	ժամ.	1 34	—	8 54	—	Ջակաղիկ	ժամ.	3 7	մեկ.	8 53	մեկ.
	մեկ.	1 44	—	9 4	—			3 17		9 3	
Խամպիւ	մեկ.	3 40	—	1 —	—	Պէնհա	ժամ.	4 13	—	9 47	—
Սիւէզ կայարան	ժամ.	—	—	5 —	—	»	մեկ.	4 17	—	9 4	—
Տօք (բարափ)	ժամ.	6 55	—	—	—	Գահիրէ	ժամ.	5 5	—	10 35	—

Մանկահասակ հերոսները ընդդիմանում են նո-
րանց։ Կռիւր և խռովութիւնը սաստկանում է։
Շինութեան ոգին յուսահատուելով աներեւութա-
նում է։ Նոյա խռովութեան և աղաղակի ձայնը
հասնում է երկինք. դիք իջնում են ցած. Արա-
րատայ գաղաթի վերայ առեան է կազմվում։

Երկայն մօրութեամբ ծերերի բողբոջը հասնում է
մինչ տարտարոս. անդունդը բաց է լինում. յան-
կարծ երեւան է լինում իւր ստորերկրեայ խումբե-
րով, մահու ու խաւարի թագաւորը ու սարսափելի
պլուտոնը։

Երեւոյնքը ուրախութեամբ դիմում են իւրեանց
պաշտպանի առաջ և տարածվում են նորա ոտքերի
տակ և գետին են համբուրում։

«Կորէք, անիրաւներ, գողում է խաւարի թա-
գաւորը դէպ մանկահասակ հերոսները. դուք, լիբր
լակոտներ, մարտնչում էք իմ իշխանութեան դէմ։
Ես ինքս իմ ձեռքով հանելով տարտարոսի կամար-
ներէն երկու քար, ձգեցի աշխարհ. մինը անցաւ
Արարիւյում, որի վերայ դուած է այժմ Մէքեայի
սրբարանի հիմքը, և միւսը Հայաստան, որի վերայ
առաջ դրուած էր և այժմ նոյնպէս պիտի դրուի
նորա շինութեան հիմքը։»

Մինչ պլուտոնը բարկացած կամէր իւր երեքու-
կէնի հարուածով դրոշել չորս հերոսները դէպ ան-
դունդը, յանկարծ Հերմէսը վերայ է հասնում։ Նա
ամբողջ է մահու Արքայի բարկութիւնը ու հրաւի-
րում է նորան Արարատ, ուր դիք խորհուրդ ունէին
ու նորան սպասում էին։

Մի քանի րոպէից յետոյ յայտնվում են Ապո-
լոնը և Աթենասը. Նոքա կարդում են դից վճիռը,
որով սեւ զգեստաւոր ծերունիքը զատապարտվում
են դէպ յաւիտենական կորուստ, իսկ չորս մանկա-
հասակ հերոսներին ասում են. «դուք շորեքեանդ
միմեանց եղբայր էք. ձեր չորս քարերը պիտի դրուին
չորս անկիւններում և նոյա հիմքի վերայ պիտի
բարձրանայ շինութիւնը։»

Երեւան է լինում դարձեալ շինութեան ոգին։
Եւ վարագործը իջնում է ցած։ Թատրոնին մէջ հըն-
ջւում են ծափահարութիւններ և «կեցցէ՛ յաղթու-
թիւն», — «կեցցէ՛ նոր սերունդ»...։

ԲԱՅՅԻ

Ա Ձ Դ

Տիկին Սոֆիկ Ազգապետեան, մանկաբարձ, վկայեալ
կայսերական վարժարանէն, այժմ բնակութիւնը Դա-
հիւրէ հաստատած ըլլալով, պատիւ ունի ծանուցա-
նել հայ հաւատարմութեան որ պատրաստ է իր խնամք-
ները տալ իրեն պէժ ունեցողներուն։

Իւ երկարամանակեայ փորձառութիւնը եւ խրդ-
նամիս աշխատութիւնը զինքն բաղաժիս առաջնա-
կարգ մանկաբարձերու կարգը կանգնեցնելու։

Դիմել Շուպրա, Չամաթի փողոց քիւ 12։ Եւ
կուսաբքի եւ հիմնադրութեան օրեր առաւօտուն կը գրս-
նուի Սարաֆեան դեղարանը ի Պէն-Էլ-Սուրէն։

ԴԻԻՐՈՒԹԻՒՆ, ԴԻԻՐՈՒԹԻՒՆ, ԴԻԻՐՈՒԹԻՒՆ

Ստորագրեալս պատիւ ունիմ ծանուցանելու քե
պատրաստ եմ դիւրամասշտի սոկոսով փոխաւորու-
թիւն ընել մեր հայ գաղթականներուն որոնք գրաւ իր
ձեռքին դժուարութեան կը հանդիպին խղճամիտ սա-
րաֆ մը գտնելու։

Խանութի մէջ կը վաճառուին նաեւ տեղական
վիճակահանութեանց տոմսեր, ամսական վճարում
ներով։

Ս. ՋՈՒՐԻԿ ՕՂԼՈՒ

Շարա Ապս-Էլ-Ազիզ, բարոնին կից

ՏՕԳԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, սամոսի, մոր-
քի եւ զգային հիւանդութեանց։ Կ'ընդունի իրեն
դիմող հիւանդները Մեզոն Ջահար, Շեքիւրս Հօթելի
նիւղ դէմը. ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12
եւ կէս օրէն վերջ 3էն 5։ Բոլոր վկայեալ աղբաթ
ձեռք կը դարձանուին։

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ